

N1224

ՀԱՅԿ ԼՈՒՍ. ԺՈՂ. ԿՈՄՍԱՐՅԱՆՍ — ՍՈՑ. ԴԱՍ. ԳԼԽ. ԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽ. Ա. ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ № 16

Խմբ. Մ. Զառաֆյանի յեզ Ա. Արարատյանի

Ա
Ե
Ղ
Ո
Ի

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Դ Ե Գ ա 6 — 1 9 2 7

638.1

Վ-58

U
Ca2327

0 1 0927 2014/498
E105 20 05

638.1
U-58

ՀՍԽՀ Լուսավորության Ժողովրդական Կոմիտեի
Սոցիալական գասիարակության զբաղմունքի
խաղող վարչություն

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 16 «ԲՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ» № 16

Ա Շ Ղ Ո Ւ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академия Наук
СССР

900-101-1010
1927-10-10

70-20502

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1 9 2 7

28.06.2013

23.10.4



60295-67

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մեղվանոցի տեղը.
2. Բուսառատ և ծաղկավետ տեղ.
3. Մեղուի ընտանիքը.
4. Մեղվանոցի պատրաստութուն.
5. Անհրաժեշտ զործիրներ.
6. Փեթակ.
7. Դադան—Բլատտ.
8. Ինչպես վարվել մեղունների հետ.
9. Մեղունների աշխատանքը փեթակների մեջ և փեթակներից դուրս.
10. Մեղունների հիվանդությունները.
11. Վնասատուները.
12. Պարս կամ ձագ տալը.
13. Պարսի աղագործելը նոր փեթակի մեջ.
14. Դիտավոր բերքը.
15. Բուսերի արտաքսումը.
16. Զմռան պատրաստութուն.
17. Մեղվապահության կանոններ.

ՄԵՂՈՒ

1. Մեղվաճոցի տեղը

Մեղուններին պահելու տեղը կամ մեղվա-նոցը աշխատում են ընտրել այնպիսի տեղ, վոր ազատ լինի ամեն տեսակ քամիներից— մանա-վանդ հյուսիսային: Հետո տեղն աջակես պիտի լինի, վոր գնացող-յեկողները և կենդա-նինները չխանգարեն մեղուններին, դրա համար մեղվանոցը շինում են ճանապարհներից և մարդ-կային բնակավայրից հեռու, շրջապատում են ծառերով կամ ցանկապատերով: Մեղվանոցը չպետք է լինի բաց արևի տակ, վորպեսզի շոգ չլինի, վորովհետև շոգ ժամանակ մեղունները փո-խանակ իրենց աշխատանքով զբաղվելու, ամ-բողջ ժամանակ հովհարում են:

Մեծ գետերից և լճերից պետք է հեռու լինի, վորպեսզի մեղունները հեռու տարածու-թյունից բեռնավորված վերադառնալիս չընկնեն ջրի մեջ և չխեղդվեն: Մեղվանոցի տեղը վոչ շատ խոնավ պետք է լինի, վոչ ել շատ չոր:

2. Բուսական լեզվ ծաղկավեհ տեղ

Թեև մեղունները կարողանում են 4—5 քիլո-մետր տարածություն թռչել մեղր ճարելու հա-մար, բայց ցանկալի յե, վոր մեղր հավաքելու

տեղը $1\frac{1}{2}$ քիլոմետրից հեռու չլինի: Ամենահար-մար տեղը, իհարկե, անտառի բաց ուտն երն են: Այնտեղ և՛ տաք է և՛ հանդարտ, իսկ մեղր-առատության կողմից ապահով: Ամենամեղրա-տու ծառերն են—Լորենի, Թղիլի և Սըն-ձընի (արջածառ):

Անտառի ճահճացած մասերը, սկսած գար-նանից մինչև ուշ աշուն, ծածկված են դեղնա գույն խոտ ու իկն երով, իսկ համեմատաբար ավելի ուշ՝ առավոտի հոտավետ, սպիտակ գորգերով:


Անտառից դուրս դաշտերում նույնպես կան մեղրատու բույսեր՝ վարսակի արտերում բու-սած վիկը, կապուտակը:

Փարնան սկզբներում, չերբ դաշտերում և անտառներում մեղրատու բույսերը ծաղկած չեն լինում, մեղուններն ոգտվում են պարտեզներից, նրանք առատ բերք են հավաքում թթենուց, մորիի և մոշի ծաղիկներից, բալենու, խընձորի, ծիրանի և սալորի ծաղիկ-ներից: Պտղատու թփերն ու ծառերը ամենալավ մեղրատու բույսերն են:

3. Մեղուի բնահիմք

Մեղուի ընտանիքը բաղկացած է մի քանի տասնյակ հազար անդամներից: Բոլոր աշխատանք-

ները կատարվում են միասին—ծաղիկներից նեկտար (ծաղկի հյութ) և ծաղկեփռչի չեն հավաքում, փեթակի մեջ մեղրահացեր են պատրաստում մոմից, խնամում և կերակրում են իրենց թրթուռներին: Բայց այս բոլոր աշխատանքները կատարում են աշխատավոր կոչված մեղուները:



Նկ. 1 Բանվոր մայր բու

Բազմաթիվ բանավոր—մեղուներ ից բաղկացած ընտանիքի մեջ պետք է անպատճառ լինի մեկ հատ—Մայր մեղու: Մայր մեղուն ամբողջ ընտանիքի միակ ծնողն է, միակ կատարյալ զարգացած եգը: Նա չե միայն ձուածուծ, վորոնցից զուրս են գալիս նախ թրթուրներ և ապա՝ մեղուներ: Յեթե վորեւ պատճառով ընտանիքը զրկվեց մորից, այն ընտանիքը կզրկվի բազմանալու ընդունակությունից և կը դատապարտվի մահվան, յեթե նրան նոր մայր չը տրվի: Ահա այստեղ է, վոր մեղվապահը միշտ պիտի աշխատի հոգատար լինել, առանձնապես դեպի մայրը: Մոր անհետանալու դեպքում պետք է շտապի նոր մայր տալ, վորպեսզի ընտանիքը չչրվի:

Սմառժամանակ, բացի բանվոր և մայր մեղուներից, փեթակի մեջ կարելի չե տեսնել և սրիշ տեսակի մեղուներ, վորոնք կոչվում են բոուեր:

Բոուր արու մեղուն է: Բոուերն ել ընտանիքի համար վորոշ ժամանակ հարկավոր են: Նրանց շնորհիվ մայրը բեղմնավորվում է և ձուածուծ: Բոուերը փեթակի մեջ վոչ մի աշխատանք չեն կատարում, այլ ամբողջ կյանքը պարապ են անցկացնում: Մեղրահացերի վրա նստած մեղր են ուտում, իսկ լավ յեղանակներին զուրս են

թռչում և փեթակի շուրջը տղտղալով անհող թափառում:


Բայց բոռերի յերջանկությունը շատ կարճատև և լինում—յերեք—չորս ամիս. բանվոր մեղուները նրանց հետ հաշտ են լինում միայն ամառը, քանի նրանք ընտանիքի համար հարկավոր են: Աշնան օրերը մոտենալուն պես բանվոր մեղուների վերաբերմունքը փոխվում է, նրանք բոռերին խայթում են և փեթակներից դուրս անում:

4. Մեղվանոցի պատրաստություն

Մեղու պահողը պետք է ամենից առաջ հողա և պատրաստի այն տեղը, վորտեղ ուզում է իր փեթակները տեղավորել: Նախ և առաջ՝ պետք է հարթել գետինը և ավազով ծածկել: Փեթակի շուրջը չպետք է խոտերով ծածկված լինի, վորովհետև խոտերը խանգարում են մեղուների աշխատանքին: Մանավանդ ձապ-տալու ժամանակ կարող է մայրը ընկնել նրանց մեջ և կորչել, այն ինչ՝ ավազածածկ գետնի վրա մեղվապահը շատ հեշտությամբ կնկատի: Յերբ վոր գետինը մաքուր է, փեթակի միջից դուրս թափած աղբից մեղվապահը կարող է իմանալ, թե ընտանիքն ի՞նչ դրության մեջ է, իսկ խոտերի մեջ նրանց դուրս թափած աղբը չի նկատվի:

Յերկրորդ հոգսը պետք է լինի փեթակների համար պատվանդաններ պատրաստելը. չի կարելի նրանց ուղղակի գետնի վրա դնել: Այդ պատվանդանները պիտի գետնից 40—70 սանտիմետր բարձր լինեն: Առանց պատվանդանի նախ՝ փեթակները շուտ կըփշանան, յերկրորդ՝ յեթե պատվանդան չլինի՝ զանազան վնասակար միջատներ և մեղուների թշնամիները հեշտությամբ կը մտնեն փեթակի մեջ:

Փեթակները պետք է շարել միմյանցից հեռու շախմատի քառակուսիների ձևով, ինչպես այդ ցույց է արված նկարի վրա: Նրանց միջի



Նկ. 2. Փեթակների դասավորությունը

տարածությունը պետք է լինի յերկուսկան մետրը, իսկ շարքերի տարածությունը $3\frac{1}{2}$ մետր:

Պատվանդանի ցցերը գետնի մեջ խրելուց առաջ պետք է խանձել, վորպեսզի շուտ չփռեն: Փետակները շարելիս միշտ հարթաչափով ստուգեցեք, թե նրանք ուղիղ են դրված թե վրջ: Սա շատ մեծ նշանակություն ունի: Յերբ փեթակի հատակը բոլորովին հորիզոնական է, ահա ժամանակ մեղրահացերն ել կանոնավոր կշիւնեն մեղուները, շրջանակները իրար չեն կպչի:

Յերբ այս ամենը կանոնավոր պատրաստեցիք, ձեր մեղվանոցն արդեն կարգին է. կարող եք ապահով լինել, վոր այնտեղ աշխատանքը լավ կգնա:

Ծ. Աճեցածեց գործիքներ

Այժմ տեսնենք ինչ անհրաժեշտ գործիքներ են հարկավոր մեղվանոցում աշխատելու համար: Այդ գործիքներից շատերը կարող եք ինքներդ պատրաստել, բավական է իմանաք, թե վնրը ինչ բանի համար է գործածվում: Յեթե իրականը ձեռք բերել կամ գնելը դժվար է՝ պետք է մտածել, թե ինչով կարելի է փոխարինել:

1). Հարկավոր է բոլ, վորպեսզի մեղվապահն իր չերեսն ու պարանոցը պաշտպանի մե-

ղունների խայթելուց: Բոլը կարելի է պատրաստել տանը տյուրից



Նկ. 3. Բ ո լ


կամ չիքիլայից և հագցնել կամ կարել մի լայնեզր գլխարկի շուրջը: Բոլի ահա մասը, վոր գալիս է չերեսի դիմացը, պետք է սև կտորից լինի:

2). Մի ծխարար, վորով ծուխ են տալիս մեղուններին, չերբ ուզում են փեթակի ներսը

զննել: Վառելու համար գործ են ածում փթռակ, թուղթ կամ շորի կտորներ:

3). Շրջանակները բարձրացնելու գործիք, վոր կոչվում է վուաբլեյի գործիք:


4). Մեղրահացերը մեղուններից սրբելու խոզանակ: Կարելի է գործ ածել և սազի փետուր:



5). Մի վանդակ, վորի մեջ

Նկ. 4. Ծխարար


առանձնացնում են մայրերին և դնում են մայր
չունեցող փեթակի մեջ: Վանդակի ստորին մա-
սում կա մի փոքրիկ անցք, վորը փակած և




Նկ. 5 Վերևում՝ վուարլեյի գործիք, ներքևում՝ խողանակ.

մոմի բարակ շերտով: Յերբ մեղուները բավա-
կան ընտելանում են նոր մոր հոտին և տրամա-
դրություն են ցույց տալիս նրան ընդունելու:
նա այդ անցքը բաց և անում և դուրս գալիս:

6). Մ ո մ հ ա լ ի չ. — Սա թեյամանի նման



Նկ. 6. Ս ա յր ա ր ա ն.




Նկ. 7. Մ ո մ հ ա լ ի չ.

մի գործիք և, վորի մեջ մոմ են հալում և նը-
րանով շրջանակի վրա արհեստական մոմաթերթ
կապնում:

7). Ա բ բ ո տ ի դ ա ն ա կ՝ գործ են անում
մեղրահացերի կնիքները բաց անելու համար:


8). Ք ե ռ ի չ՝ գործ են անում փեթակների
կեղտը քերելու և մաքրելու համար, շրջանակ-
ները հեռացնելու և փեթակից հանելու համար:



Նկ. 8. Վերևում՝ Աբբոտի դանակ, ներքևում՝ քերիչ.

9). Ա ռ ե ի մ ո մ հ ա լ՝ հին մեղրահացերը
կամ մոմի մանր կտորտանքները լցնում են մեջը
և դնում արևի տակ: Բացի արևի մոմհալից, կան
և ուրիշ բազմատեսակ գործիքներ, վորոնց մեջ
մոմը հալում են՝ գոլորշու կամ ճնշման միջո-
ցով: Գոլորշու ուժով մոմ հալելու ամենահար-
մար գործիքի կազմությունն այսպես և. հին,
արդեն սևացած և անպետք մոմահացերը հավա-
քում, լցնում են մի տոպրակի մեջ և դնում են
գործիքի մեջ, վրան լցնում են ջուր ու դնում

հրակի վրա: Յերբ մոմը հալվում է և ամանի ծորակից դուրս թափվում, պետք է տույրակը




Նկ. 9. Մոմաթերթ պատրաստող գլաններ

հետզհետե ճնշել պտուտակի ոգնությամբ և շարունակել այնքան, մինչև վոր տույրակի մեջ ալիս մոմ չմնա:

10). Մոմաթերթ պատրաստող մեքենա. — Այս մեքենան անհրաժեշտ է աչն մեղվանոցների համար, վորտեղ մեծ քանակությամբ մոմաթերթ են գործ ածում:


Արհեստական մոմաթերթ պատրաստելու համար նախ՝ հալում են մեղրամոմը, հետո՝ նրա մեջ կոխում են նախապես ջրի մեջ թրջած թիա-

կանման մի տախտակ, վորպեսզի մոմը տախ-



Նկ. 10. Արհեստական մոմաթերթ.


տակին չը կպչի և արագ կերպով հանում են: Տախտակի վրա բարակ շերտով սառնում է մոմը և հեշտությամբ նրա վրայից պոկվում: Այս կերպ պատրաստած մոմաթերթը մի քանի օրից հետո անց են կացնում գլանաձև մեքենայի միջով ու ստանում արդեն գործածության համար պատրաստ մոմաթերթ: Այդ



Նկ. 11. Արհեստական մոմաթերթն ամրացրած շրջանակի վրա.

վրա դրոշմված է լինում վեցանկյունանի բլիշների հիմքը, վորի վրա աշխատավոր մեղուները բարձրացնում և լրացնում են պատերը: 11). Հացեր տեղափոխելու արկղ.

—Այս արկղը կարող է



ժամանակավորապես
փեթակի տեղ եւ
ծառայել և շատ
հարմար է։ Նրա-
նով կիսաշրջանակ-
ները տեղափոխու-
մ են մեկ փեթակից
մյուսը կամ շրջա-
նակավոր մեղրը
տանում են շուկա։

Նկ. 12. Հացե ր տեղափոխելու արկղ. Այս արկղով ան-
վրտանգ կարելի յե մեղուներ տեղափոխել
հեռավոր վայրեր։

6. Փեթակ

Բնության մեջ վայրի վիճակում մեղուներ-
ըն իրենց բնակարաններն ընտրում են ան-
տառներում, ծառերի փշակների մեջ, քարան-
ձավներում, ժայռերի ճեղքերում և այլն, բայց
այն ուրից, վոր մարդը նրանց ընտելացրեց, վոր-
պեսզի նրանց հավաքած մեղրից իրան բաժին
հանի, նրանց համար առանձին բնակարաններ
սլատրաստեց, վորոնց մենք փեթակ ենք ասում։
Ի հարկ ե, ձեղանից ամեն մեկն ել տեսած կլի-
նի, թե ինչպես այս կամ այն գյուղացու դռան
առաջ պառկած տաշտերի կամ բլթոցների մեջ

մեղուները դուրս ու ներս են անում։ Անտառա-
բնակ գյուղացիք ծառերի կոճղերից շինած
ամանների մեջ են պահում։ Ահա փեթակների
այն տեսակները, վոր մեր գյուղացիք դործ են
ածում։

Ի հարկ ե, այդպիսի ամանների մեջ պա-
հած մեղուներից շատ արդյունք ստանալ չի
կարելի։

Ինչո՞ւ։ Այդ բանը դուք լավ կհասկանաք,
յերբ կծանոթանաք նորագույն փեթակի կազ-
մության հետ։ Այնտեղ, նրա առավելություննե-
րը և հարմարությունները թվելիս, համեմատու-
թյուն կանեք հին ձևի փեթակների անհարմա-
րությունների հետ և դուք կհամոզվեք, վոր իս-
կապես, նոր ձևի փեթակներն ավելի լավ ար-
դյունք կտան, քան հին փեթակները։

7. Դադան-Բլաս

Այս փեթակը բաղկացած է հատակից, բնից
վերնահարկից, շրջանակներից, կիսաշրջանակնե-
րից, միջնատախտակներից, բարձից և ծածկից։

1. Բունն ունի տասներկու շրջանակ։



2. Նայած տարվա յեղանակին կամ ընտա-
նիքի ուժին՝ փեթակի բունը կարելի յե մեծացնել
կամ փոքրացնել միջնատախտակով։

3. Փեթակը տարեկան յերեք անգամ

60295-67



մաքրում են: Դադան-Բլատտի փեթակի



հատակը շարժական է և մաքրելու դուր շատ դյուրին է:


4. Արկանոցն այնպես է շինված, վոր հեշտությամբ կարելի չե մեծացնել, փոքրացնել և հարկ յեղած դեպքում բոլորովին փակել:

5. Այդ փեթակը հնարա-

վորությունն է տալիս հեշտ և արագ զննելու մեղուներին ընտանիքը:


6. Սովորաբար մեղուները մեղրն ամբարում են ընի վերնահարկում. այնպես է Դադան-Բլատտի վերնահարկը, վոր նախած ասրվա բերքին, կարելի չե ավելացնել առանց անհանդուրապացնելու ընի մեղուներին:

7. Առանց մեղուներին վնասելու կամ ջարդելու կարելի չե մեղր հավաքել:



8. Շատ հեշտությամբ կարելի չե ընտանիքը մեծացնել արհեստական ձագերով և միևնույն ժամանակ արդելել, վոր չափից դուրս ձագ չտան և ընտանիքը թուլացնեն:

9. Այս փեթակում մեղուներն ապահովված են շոգից և ցրտից:



Այս փեթակը սովորաբար շինված է լինում $\frac{3}{4}$ վերշուկանոց հաստություն ունեցող տախտակից: Ամեն մեղվապահ պարտավոր է մի հատ այս փեթակից ձեռք բերել՝ կանոնավոր և ճիշտ չափերով շինված, վորպեսզի նրանից ընդորինակե:

Տախտակներ այդ փեթակի հատակազիծը: Ձեզանից ամեն մեկն ել կարող է պատրաստել, նախ՝ նրա փոքրիկ մոզելը և տալ՝ իսկականը:

8. Ի՞նչպես վառվել մեղուների հետ

Յերբեք չպետք է փեթակը բաց անել ամ-

պատ կամ անձրևոտ յեղանակներին. մեղուներն այդպիսի յեղանակներին սաստիկ զրգովում են: Նրանց հետ միշտ պետք է աշխատել պարզ, արևոտ սրբերին, լերբ փեթակի մեջ համեմատաբար քիչ մեղուներ են լինում և նրանք մեծ մասամբ գնում են դաշտ՝ բերք հավաքելու:

Աշխատելուց առաջ պետք է հագնել քողը, լեթե ձեր վերնագրեստը բրդից ենույնպես հանեցեք, վորովհետև մեղուները բուրդ չեն սիրում, մանավանդ՝ սև գույնի. դա նրանց սաստիկ զրգում է: Ավելի լավ է բլուզով աշխատել: Պետք է առաջուց ամեն միջոց ձեռք առնել, վոր մեղուները զրգովելու առիթ չունենան, վորովհետև մեկ վոր նրանց զրգուցիք, ալևս յերկար ժամանակ կդժվարանաք նրանց հանգրստացնել: Վարժվելուց հետո առանց քողի չեկ կարող եք աշխատել:

Յեթե ծխարարի կարիք զգացվեց, կվերցնեք մի կտոր չոր, փառած փայտ և նրա մեջ կայրեք. հետո կկանգնեք փեթակի մի կողմը և թեթե ծուխ տալով մեղուներին կհեռացնեք և ձեր գործը կտեսնեք: Ծխի ժամանակ մեղուներն առհասարակ հարձակվում են մեղրի վրա և ուտում: Իսկ յերբ նրանց բուշը լինի է մեղրով՝ չեն կարողանում փորը ծռել և խայթել:

Նախ՝ կվերցնեք փեթակի կտրի ծածկը,

հետո՝ նրա տակը դրած հարդի բարձր, բարձի տակ շրջանակներին կպած ե քաթանի—մոմ-լաթը:

— Ինչո՞ւ համար ե այդ բոլորը, — կհարցնեք դուք: — Մի՞թե մեղուների համար շոգ չի լինի:

Ճիշտ ե. ցերեկը շատ աաք կլինի, բայց գիշերը — հով: Ընդհանրապես թրթուռների դարգացման համար անհրաժեշտ ե այդ տաքությունը: Շատ վտանգավոր ե թրթուռներին մրսացնելը: Վրայի ծածկոցները ջերմության վատ հաղորդիչ են, նրանք փեթակը պաշտպանում են ցրտից և խոնավությունից: Կարծես մեղուներն իրանք ել հասկանում են այդ տեսակ ծածկոցի կարիքը: Որինակ՝ յերբ շրջանակների վրա սոսկ քաթան եք փռում, նրանք ներսի կողմից սոսքնձով պատում են և դարձնում անթափանցելի:

Փեթակը բաց անելիս ամենագլխավոր պայմանն այն ե, վոր չվախենաք. ձեռքերդ չթափահարեք, յերբ մեղուն ձեր ձեռքի վրա նստի. դրանով դուք նրանց կզրգուեք և նրանք անպատճառ ձեզ կխայթեն:

9. Մեղուների աշխատանքը փեթակի մեջ լեվ փեթակից գուրս

Ամեն անգամ, յերբ փեթակը բաց եք ա-

նում, դուք տեսնում եք, թե ինչպիսի յեռանդուն աշխատանք ե կատարվում այնտեղ: Աշխատավոր մեղուներն սկսում են շինել խորիսխ: Վերջինս շինում են նրանք այն մոմից, վոր դուրս ե գալիս նրանց փորի ողակների արանքներից՝ փոքրիկ թերթիկների ձևով: Խորիսխը կախվում ե միշտ փեթակի առաստաղից ուղղաձիգ կերպով դեպի ցած և բաղկացած ե լինում բջջիներից, վորոնք իրենց բացվածքներով նաչում են հակառակ կողմեր: Բոլոր բջիջները վեցանկյուն են և ունեն նույն մեծությունը. նրանց հատակը խորացած ե և կազմված ե յերեք հարթություններից, վորոնք մեջ տեղում միանում են միմյանց հետ:

Հենց վոր առաջին խորիսխը պատրաստվում ե, մայրը յուրաքանչյուր բջիջի մեջ ածում ե մի հատ ձու: Մի բանի որից հետո, ձվից դուրս ե գալիս փոքրիկ թրթուռ. այս թրթուռն ապրում ե մթության մեջ, զրա համար ել լինում ե կուչո և սպիտակ գույնի: Թրթուռը գուրկ ե լինում նաև վոտներից: Այդ վիճակի մեջ թրթուռը, պարզ ե, վոր չի կարող կեր գտնել և նա քաղցից կմեռներ, յեթե աշխատավորները նրան չկերակրեցին: Յեվ աշխատավորները կերակրում են նրան այնպիսի առատությամբ, վոր

մի քանի որից հետո այդ թրթուռը հասնում է իր կատարյալ մեծության: Այդ ժամանակ աշխատավորները ծածկում են բջիջը մոմե կափաբիչով: Թրթուրը բջիջի մեջ փոխարկվում է հարսնյակի և շուտով հարսնյակից դուրս է գալիս մեղուն՝ հասունացած վիճակում:

Գարնանը, բացի սովորական բջիջներից, մեղուները պատրաստում են նաև վորոշ թվով, համեմատաբար ավելի խոշոր, բջիջներ. այս բջիջների մեջ զարգանում են արուները կամ բոռերը: Բացի դրանից, մեղուները պատրաստում են նաև մի քանի հատ ել շատ մեծ բջիջներ և առանձին խնամք են ցույց տալիս նրանց մեջ յեղած թրթուռներին: Այս թրթուռներից դուրս են գալիս յերիտասարդ մայրեր:

Ձմեռը փեթակում.—Ձմեռը բոլոր մեղուները հավաքվում են փեթակի միջին մասը: Այդպես խմբված լինելու պատճառով նրանց ջերմաստիճանը, նույնիսկ ամենադաժան ձմեռը Յեսլուսի 10 աստիճանից ցած չի իջնում, դրա համար ել մեղուները ձմեռը չեն ընդարձակում, հետևապես և ձմերալին քուն չեն մտնում, ինչպես մյուս միջատները, վորոնք ձմեռն անց են կացնում առանձին-առանձին:

Մեղուներն չերկարատև ձմեռն առանց կե-

րակրի ապրել չեն կարող: Բայց վճռեղից պետք է վերցնեն նրանք իրենց կեյակուրը, քանի վոր ծաղիկներ չկան: Դրա համար մեղուները դեռ ևս ամառը բջիջների մի մասը լցնում են մեղրով և ծաղկափոշով և մեղրով լցրած բջիջները պինդ փակում են մոմե խփիկներով կամ, ինչպես ասում են՝ սերեկում են: Ձմեռվա վերջը կերի պաշարը սպառվում է, բայց հենց այդ ժամանակ վրա յե հասնում կրկին գարունը և մեղուները նորից իրենց համար կերակուր են գտնում ծաղիկների մեջ:

Թե մեղվի մարմնի կազմությունն ինչպիսի հարմարություններ ունի աշխատանքներ կատարելու համար.— Թե ինչպես է գտնում մեղուն իր կերակուրը.—Մեղուն ունի յերկու հատ մեծ բարդ աչքեր, վորոնք գտնվում են գլխի յերկու կողմերում, բացի դրանից՝ ունի կետերի նմանող յերեք հատ ել հասարակ աչքեր՝ գագաթի վրա: Սակայն, չնայած դրան, հեռուն նա չի տեսնում: Այս է պատճառը, վոր նա կերը գրանում է մեծ մասամբ հոտառության միջոցով: Հոտառության գործարանը նրա բողկուկներն են:

Ինչպես է ալցելում նա իրեն կե-

րակուրը մատակարարող ծաղիկն երին.—Յուրաքանչյուր ծաղկի մեջ կա շատ չնչին բանակութեամբ մեղրու ծաղկափոշի։ Յեթե մեղուն մի ծաղկից մշուսը գնար սողալով, հազիվ թե այդ կերակրով կարողանար կշտանալ։ Հետևապես նա պետք է թևավոր լինի, ինչպես վոր ե, իսկապես։ Բայց մեղուն պետք է կերակուր հասցնի նաև անոգնական վիճակի մեջ գտնվող թրթուռներին և այն մեղուններին, վորոնք մնացել են փեթակի մեջ, այդ դեռ բավական չէ։ Նա պետք է ձմեռվա համար պաշար ել հավաքի։ Այդ պատճառով պետք է այցելի ահագին քանակութեամբ ծաղիկներ, հետևապես պետք է կարողանա թռչել լավ և արագ կերպով։ Թռչելու համար մեղուն ունի 4 հատ թաղանթաթևեր։

Թե ինչպես է հանում մեղուն իր կերակուրը ծաղկի միջից.— Թաթերի վերջին հողվածների ծայրերին գտնվող յեղունդներով նա ամուր կերպով կպչում է ծաղկին։ Այդ յեղունդների արանքում գտնվում են կրպչուն բարձիկներ, վորոնք ձմանների դեր են կատարում և հնարավորութուն տալիս հաստատուն կերպով նստելու նույն իսկ հարթ և ուղղաձիգ մակերևույթների վրա։

Ծաղկի վրա նստելուց հետո, գործի մեջ է

մտցնում նա իր բերանի մասերը։ Նրա բերանի մասերից մի բանիսը միասին կազմում են մի խուլովակ կամ կնճիթ։ Այս կնճիթի մեջ յետ ու առաջ է շարժվում նրա յերկար «լեզուն» Յերբ լեզվի վրա գտնված մազիկները թաթախվում են ծաղկի մեղրահյութի մեջ, մեղուն իր յեղուն ներս է քաշում, այդ հյութը գնում է այնուհետև կնճիթի ներսը և այդտեղից ել ծծվում բերանը։ Ծամոզ ծնոտներով ծամում է նա ծաղկափոշին, մշակում է մոմը և մեռած մեղունների դիակները դուրս հանում փեթակից։

Մեղուն մեղրը տանում է փեթակն իր կերակրափողի ուռուցիկ մասով. փեթակ հասնելուց հետո, այդտեղից հանում է և լցնում բջիջները կամ կերակրում նրանով փեթակում մնացած մեղուններին։

Ծաղիկներից հավաքած ծաղկափոշին փեթակ է տանում այսպես կոչված կողովիկներով։ Այս կողովիկները վոչ այլ ինչ են, բայց յեթե հետևի վոտների չորրորդ հողվածի արտաքին յերեսի վրա գտնվող փոսեր։ Նույն վոտների հաջորդ հողվածի ներքին յերեսները պատած են բազմաթիվ կարճ մազիկներով, վորոնք այդտեղ կազմում են մի տեսակ խողանակ։ Այդ խողանակով մեղուն հավաքում է ծաղկից ծաղկափոշին

և ածուս կողովիկներն մեջ և, բացի զբանից, մաքրում ե իր վրա չեղած ծաղկափռչին: Կողովիկներն մեջ ծաղկափռչուց առաջանում են զնդիկներ:

Մեղվի նշանակութունը բնութայն մեջ. — Մեղունները, ծաղիկներից սնունդ հավաքող միջատների մեծամասնության նման, բույսերին հակառակ ծառայություն են մատուցանում: Նրանք ծաղկափռչին մի ծաղկից տանում են մի այլ ծաղիկ և իրենց մարմնի շարժումներով թափելով մյուս ծաղկի վարսանդի սպիտ վրա՝ առաջ են բերում ծաղիկների փոշոտումն և այդպիսով նպաստում նրանց բեղմնավորությանը:

Թռչունների մեծամասնությունը, բացառությամբ արագիլի, կանաչ փայտփորի և չերաշտահավերի, մեղուններին ձեռք չի տալիս, վորովհետև մեղուն վտանգավոր կերպով խայթում ե: Մեղվի զլխավոր թշնամիներն են պիծակները:

Մեղվի խայթը մի կիսաբաց սուր խողովակ ե, վորի մեջ յետ ու առաջ են շարժվում յերկու հատ սուր ասեղներ՝ դեպի յետ դարձած փոքրիկ ճանկերով: Խայթը միացած ե թռնավոր հեղուկով լցված մի փամփուռտի հետ: Յերբ մեղուն խայթում ե, վերքի մեջ թափվում

ե թռնավոր հեղուկից մի փոքրիկ կաթիլ: Մեծ կենդանիներին, նույնպես և մարդուն, այդ թռչնը ցավեր ե պատճառում և առաջ բերում խայթած տեղի շուրջը հիվանդական բորբոքում իսկ փոքրիկ կենդանիներին ուղղակի սպանում ե:

10. Մեղունների հիվանդությունները

1. Ցեց. — Այս հիվանդությունն առաջ ե գալիս կեղտից և յերևան ե գալիս այն փեթակներում, վորտեղ թողած են լինում ախքան մեղրահացեր, վոր մեղունները չեն կարողանում նրանց ծածկել: Մեկ ել այս հիվանդությունը յերևում ե թույլ ու վորբացած ընտանիքներում: Յեթե ցեցն արդեն չերեացել ե և մեղրահացերի մեջ ախքեր են բացվել, հարկավոր ե այդ հացերն անմիջապես հեռացնել և հալել: Յեթե վորդով հացերի մեջ ել ցեց ե յերեացել, պետք ե մաքրել մեղուններից և տանել ուժեղ փեթակների մեջ: Ցեցից ազատվելու համար պետք ե փեթակի պատերի, միջնապատի և հատակի վրա նափտալին շաղ տալ և փեթակի մեջն ել պահել կամֆորայի մի փոքրիկ կտոր՝ շորի մեջ փաթաթած:

2. Փորլուծություն — Այս հիվանդությունը նկատվում ե զարնան սկզբներին և ա-

առջ ե գալիս մեղուները յերկար ժամանակ փեթակում փակված մնալուց, վատ կերակրութիւն և անհանգիստ ձմեռելուց: Սովորաբար մեղուներն իրենց կղկղանքը դուրս են թափում փեթակից:

Սաւաճի ձմեռը նրանք կղկղանքը պահում են ստամբքում և դատարկում են միայն դուրս գալու առաջին օրը, յետեւ ձմեռելու տեղը բարենաշոյ գ յեղել: Հակառակ դեպքում, յետեւ ձմեռելու սենյակը պահանջից ավելի ցուրտ կատար ե յեղել՝ այն ժամանակ նրանց հանգստությունը խանգարվում ե, նրանք սովորականից ավելի յեն ուտում, դրանից ել նրանց աղիքները չափից ավելի լցվում են և նրանք ստիպված կղկղանքը թափում են փեթակի մեջ, հացերի և պատերի վրա:

Սովորաբար դարնան առաջին թռիչքը կատարելուց հետո այս հիվանդությունն անցնում ե:

3. Փտախտ կամ վորդեացավ և թթված վորդ.— Փտախտի հիվանդությունը կարելի յե նկատել մինչև անգամ առանց փեթակը բաց անելու: Այդ հիվանդության ժամանակ մեղուները համարյա չեն թռչում, կորցրնում են իրենց սովորական յեռանդը, փեթակից ծանր հոտ ե գալիս, իսկ արկանոցի առաջ

թափված են լինում ակնամոմի նման մոխրագույն հատիկներ: Այս հիվանդության ժամանակ փչանում են վորդերը և կանգ ե առնում սերնդի աճումը:

Այսպիսի դեպքում նախ և առաջ պետք ե արգելել մօրը ձու ածելու, բանտարկելով նրան մայրարնի մեջ 21 օր: Ամբողջ 21 օր պետք ե փեթակը ծուխ տալ ֆորմալինի 20% լուծույթով: Մեղուներին պետք ե կերակրել հատուկ պատրաստված շաքարաջրով: 21 օր լրանալուց հետո մեղուներին պետք ե տեղափոխել մաքուր փեթակի մեջ, նստեցնելով մաքուր մեղրահացերի և մեղրաթերթերի վրա, իսկ մօրը՝ փոխել: Նորից ծուխ տալ 7—10 օր, և այն հացերը, վորոնց վրա վարակված ընտանիքի մեղուներն ելին նստած՝ պետք ե հալել: Փեթակը ցանկալի յե այրել:

4. Թթված վորդ.— հիվանդությունն ել շատ նման ե փտախտին և նրա բժշկությունն ել կատարվում ե միևնույն միջոցներով: Այս հիվանդությունից փչանում են ինչպես վորդերը, այնպես ել մեղուները: Նրանց ստամոքսները փքված ե լինում և նրանցից քացախի կամ փտած խնձորի հոտ ե գալիս: Այս հիվանդությունը թեև վարակիչ ե, բայց այնքան ել վտանգավոր չե:

1. Ի՞նչ միջոցներով են բժշկոււմ ձեր շրջանոււմ մեղուների հիվանդութիւնները:

2. Արդյոք հետեւում են և ի՞նչ նախադրուշացուցիչ միջոցներ են ձեռք առնում հիվանդութիւններից մեղուներին ազատ պահելու համար:

10. Վնասատուները

Մեղուների ամենավտանգավոր թշնամիները մկներն են: Տարվա յերեք յեղանակներին մկներն առանձին վնաս չեն կարողանում հասցնել մեղուներին, մանավանդ ուժեղ ընտանիքներին, բայց ձմեռը, յերբ նրանց հարկավոր է կատարյալ հանգստութիւն, մկները մտնում են փեթակի մեջ, բուն դնում, ուտում են մոմն ու մեղրը, և այնքան չեն ուտում, վորքան փչացնում են: Մեղուները նրանց ներկայութիւնից խիստ անհանգստանում են, անհանգստութիւնից ուժ են տալիս մեղր ուտելուն, վորի հետեանքը լինում է փորլուծութիւն: Իսկ յեթե այդ գրութիւնը յերկար է տևում, նրանք ամբողջ պաշարն ուտում են և հետո սովից մեռնում: Մեղուներին վռնչացնելու շատ ու շատ միջոցներ են փորձել, բայց պետք է խոստովանել, վար վոչ մի հետեանք չեն տվել: Մկների դեմ կռիւն

միակ միջոցը կատուն է, վորի ոգնութիւնն էլ պետք է դիմել:

12. Պարս կամ ձագ հալը

Մեղուներն առավորից մինչե յերեկո թրուշում են դաշտ և այնտեղից վերադառնում հոգնած ու ծանրաբեռնված: Որ-որի վրա ավելանում են մեղրով լի բջիջները: Կեքած բջիջների կափարիչները բացվել և նրանց միջից դուրս են յեկել յերիտասարդ մեղուները: Ամեն որ՝ առավորները ժամը տասներկուսին մոտիկ՝ խումբ-խումբ դուրս են գալիս յոթորական ջահել մեղուները և իրենց առաջին զբոսանքն են կատարում փեթակի շուրջը, ծանոթանում են նրա տեղի ու դիրքի հետ:

Փեթակների բնակիչների թիվը բանի գնում ավելանում է, տասներկու շրջանակներն ել լիքն են մեղուներով, մանավանդ փեթակի միջին մասերում, վորտեղ նրանց թիվն այնքան շատ է, վոր միմյանցից կառչում են և կախ ընկնում դեպի ցած:

Այդ ժամանակ մեղրահացերից մի քանիսի վրա, կողքերից յերևում են բոլորովին նոր ձևի բջիջներ: Նրանք շատ նման են մատնոցների: Մայրը նրանց մեջ ածում է մի-մի հատ ձու, վորոնցից պիտի դուրս գան մայրացուներ,

անձն աչդ պատճառով ել այդ բնութիւնները կոչվում են մալրաբնութիւններ: Մի քանի ուրից հետո մալրաբնութիւններն ել արդեն կոչված են. դա նշան է, վոր մի քանի ուրից հետո փեթակը պարս պիտի տա:

Հենց այն է՝ նոր մալրը պատրաստվում է մալրաբնութիւնից դուրս հանել իր գլուխը—հին մալրն արդեն աշխատավոր մեղուների մի մասի հետ թողնում է փեթակը: Փեթակի արկանոցից իրար հընթելով՝ դուրս են գալիս հազարավոր մեղուներ. այդ մեղուների խմբի մեջ տեղը գրաւում է հին մալրը: Մեղուս, ինչպես ասում են, ձագ է տալիս: Փեթակից դուրս յեկած այդ մեղուները մի քանի րոպե մնում են ողի մեջ, բայց հետո նստում են վորեւե ծառի ճյուղի վրա: Այդ ժամանակ նրանք կախկախվում են մեկը մյուսից և ստացվում է մեղուներից կազմված հսկայական մի վողկույդ: Մեղվապահը տեսնելով այդ հավաքում է նրանց ածում նոր փեթակի մեջ: Ահա այս նոր փեթակում առաջանում է մեղուների մի նոր ընտանիք: Յեթե պատահում է, վոր մեղվապահը մեղուների այդ խումբը նոր փեթակի մեջ չի ածում, այն ժամանակ մեղուներն իրենք գտնում են ծառի վորեւե փշակ և տեղավորվում այնտեղ: Այդպես են ապրում վաղբերն մեղուները:

Մինչ այս մինչ այն՝ այն փեթակում, վոր տեղից դուրս է յեկել մեղուներն այդ խմբակը, դուրս է գալիս յերիտասարդ մալրը. սա մեծ յեռանդով այս ու այն կողմն է գնում և աշխատում է վոչնչացնել ապագա հակառակորդներին, վորոնք գեռես գտնվում են հարսնյակի դուրս թչան մեջ: Յեթե փեթակում գտնվող մեղուների թիվը շատ մեծ է և մեղուները ցանկանում են կրկին ձագ տալ, ապա նրանք թուլ չեն տալիս, վոր մալրը իր մտադրությունն իրագործի, և նա ստիպված է լինում մեղուների մի մասի հետ փեթակից դուրս գալ և մի նոր ձագ առաջ բերել, իսկ փեթակի մեջ մնում է այն մալրը, վոր հետո դուրս է գալիս հարսնյակի դրությունից:

13. Պարսի տեղավորելը նոր փեթակի մեջ

Նոր փեթակը, վորտեղ պետք է տեղավորեն պարսը, հարկավոր է լավ մաքրել, վորպեսզի վոչ մի հոտ չգա: Կամ ավելի լավ է, այնպիսի յեղով ոծել, վորի հոտը մեղուները սիրում են: Որինակ՝ մեղվապահները այդպիսի ժամանակ գործ են ածում լիմոնի յուղ:

Մեղուներին նոր փեթակի մեջ դնելուց առաջ պատրաստում են շրջանակներ, վորոնք վրա կպցնում են մի բարակ շերտ արհեստա-

կան մոմաթերթ: Արհեստական մոմաթերթը շրջանակներին կպցնում են մոմհալիչի ոգնությամբ և յերկաթե բարակ լարերով ամրացնում, վորպեսզի միառժամանակ վայր չընկնի մինչև վոր մեղուներն իրանք ավելի հաս աատուն կերպով ամրացնեն:

Արհեստական մոմաթերթի գործածությունը յերեք ոգուառ ունի.

1. Արհեստական մոմաթերթերի վրա մեղուները կանոնավոր խարխախներ են պատրաստում, վորովհետև նա հարկավոր ուղղությունը ցույց է տալիս.

2. Արհեստական մոմաթերթի վրա մեղուները բանվորների բջիջներ են պատրաստում և վոչ թե բոռեր: Արդեն կարող եք գուշակել նրա ոգուտը:

3. Արհեստական մոմաթերթը, մանավանդ յեթե բավականին լայն է, կըճատում է մեղուների աշխատանքը: Շրջանակները կարելի չե մոմել կամ ամբողջ լայնությամբ, կամ 4-8 սանտիմետր շերտերով: Այբողջ շրջանակը մոմեն աշն ոգուտն ունի, վոր մեղուները փախանակ մոմ պատրաստելու վրա յեռանդ վատնելու, ալդ աշխատանքը մեղր հավաքելու վրա կը թափեն:

Նոր փեթակը դնում են սավերոտ տեղ, վոր-

պեսզի մեղուները չշոգեն: Սաստիկ շոգից նրանք կարող են փախչել:

Նոր փեթակի մեջ շրջանակներն ել հաշվով են դնում, նայած ամբողջ պարսի քալին: Յուրաքանչյուր 460 գրամին մեկ շրջանակ ավելի, որինակ, յեթե պարսը կշռում է $1\frac{1}{2}$ քիլոգրամ, նրան պետք է տալ հինգ շրջանակ:

Բացի այդ՝ տալիս են նաև մեկ շրջանակ մեղրով և մեկ շրջանակ ել թրթուռներով: Մեղրով շրջանակը տալիս են, վորպեսզի վատ յեղանակներին տանը ֆնալիս միառժամանակ կերակուր ունենան: Թրթուռներով շրջանակն ապահովում է նրանց փախուստի չդիմելը: Պատահում է, վոր մեղուներին մի բան գուր չի գալիս և նրանք այդ փեթակը թողնում փախչում են: Յեթե փեթակում թրթուռներով շրջանակ կա, սո վորաբար այդ բանը տեղի չի ունենում:

Պարոն փեթակում տեղավորելու չերկու միջոց կա. կամ ուղղակի փեթակի վերևի կողմից թափ են տալիս շրջանակների վրա, կամ արկանոցի (մուտքի) մոտ դնում են տախտակ և յերթ թափ են տալիս մեղուներն իրենք կամաց-կամաց մտնում են փեթակի մեջ:

Պարս տալուց հետո հին փեթակի շրջանակների վրայից մայրաբջիջները կտրտում են,

վորպեսզի այդ ընտանիքից այլևս նոր պարս
դուրս չգա և անդամների թիվը նվազելով ընտա-
նիքը չթուլանա:

Այդ ընտանիքում նոր մայրը մի քանի
որից հետո դուրս ե թողնում բեղմնավորվելու,
հետո վերադառնում ե տուն և յերեք որից հե-
տո սկսում ձու ածել:

14. Գլխավոր բերքը

Բնությունը պճնված ե բազմեւանգ ծաղիկ-
ներով: Ամեն որ նոր ծաղիկներ են յերևում:
Մարգագետիններում արդեն յերևում են սպի-
տակ առվույտի ծաղկ ե գնդերը: Անտա-
ռում ծաղիկ ե լորենին: Հասել ե մեղրահա-
վաքի ցանկալի օրը:

Գլխավոր բերք են ասում առհասարակ
այն շրջանը, յերբ փեթակի մեջ սկսվում ե
մեղրի առատ հոսանքը: Այդ շրջանը տեղում ե
յերկու շաբաթից մինչև մեկ ու կես ամիս: Այդ
ժամանակ փեթակի գլխավոր բնի վրա ավելա-
ցնում են հավելյալ շրջանակներ, վորոնք միա-
սին մագաղին անունն են կրում: Սովորա-
բար մագաղինները դնում են ամառը, գլխավոր
բերքի ժամանակ, և նրա մեջ ամբարած մեղրն
ամբողջովին մեղվապահի ոգտին ե:

Մագաղին դնելը չի կարելի ուշացնել: Գլխ-
ավոր բերքի թեկուզ մեկ օրը կորցնելը մեղ-
վապահի համար մեծ վնաս ե: Այդ օրերին յու-
րաքանչյուր ընտանիք կարող ե որական 2—8
կիրովրամ մեղր բերել: Բայց ժամանակից շուտ
մագաղին դնելը վոչ միայն անոգուտ ե, այլ և
վնաս մանավանդ յեթե ընտանիքը թույլ ե: Փե-
թակը կցրտի և դրանից զարգացումը կանգ
կառնի:

Ուրեմն, ժամանակին մագաղին դնելը շատ
կարևոր ե:

Դադան—Բլատտի մագաղինների շրջանակ-
ները յերկու անգամ ավելի փոքր են, քան բը-
նում գտնվածները, այդ պատճառով շատ ան-
գամ նրանց կիսաշրջանակներ են ասում:
Հավ ե, վոր այդ կիսաշրջանակները խորիսինե-
րով լինեն:

Բարեհաջող տարիներում գլխավոր բերքը
բավականին յերկարատե ե լինում և մեղվապահ-
ները մեկ մագաղինի փոխարեն յերկու-յերեք են
դնում: Արդեն լցված և կնքված. խորիսինները
վերցնում են և «կենտրոնախույս» մե-
քենայով մեղրը քամում: Դատարկ մեղրահա-
ցերը նորից իրանց շրջանակներով դնում են մա-
գաղինի մեջ: Բամելուց առաջ Արբատի դա-

ն ա կ ո վ խորիսխի փակած բջիջների բերանները բաց են անում, վորպեսզի մեղրը հեշտությամբ դուրս ծորի կենտրոնախույսի մեջ, իսկ այնտեղից ել ծորակով՝ հատուկ ամանների մեջ:

Քամած կիսաշրջանակները միառժամանակ դուրս են թռչում, վորպեսզի մեղուները գան և նրանց վրայից մեղրի մնացորդները մաքրեն Այդպես մաքրելուց և չորացնելուց հետո հավաքում են:

15. Բոռերի արտաբուծումը

Ամառը վերջանում է: Դաշտ և մարգագետինն ամայանում են: Ծաղիկները չորանում են և թափվում: Դեռ ցուրտը վրա չի հասել, բայց զգացվում է աշնան մոտենալը: Կյանքը փեթակում կարծես թե մեռած է: Մեղուները համարյա թե փեթակից դուրս չեն թռչում, դառել են մեղկ և անգործունյա: Հանկուրծ փեթակում ըսկսվում է ինչ վոր անսովոր կենդանություն: Ի՞նչ է պատահել: Մեղուները արտաբուծում են բոռերին: Արկանոցի առաջ, տախտակի վրա հավաքվել են մեղուների հսկա բաղմունքուն: Կռիվ են Բոռերն անձնատուր չեն լինում և ամեն կերպ աշխատում են դիմադրել: Ինչպես յերևում է, նրանց համար շատ դժվար է տաքուկ և կուշտ

փեթակից բաժանվելը, բայց կռիվն անհավասար է. յերեքը մեկի դեմ: Ամեն մի աքսորյալին գալիս է յերեք ուղեկից: Յերկու մեղու մեկ բոռի թևերից բռնած քաշ են տառիս արկանոցի տախտակի վրայով, իսկ յերրորդը հետևից հրում գ: Բոռին հասցրեցին մինչև տախտակի չեզրը և գլորեցին ցած: Նրա հետևից գալիս են միշտ նորերը:

Ամբողջ ուրը տեք այս արտաբուծումը: Վերջի վերջո, բոռերը հնազանդվեցին: Բայց այդտեղից թռան և ուղում են ուրիշ փեթակ մտնել: Սակայն, այնտեղ մանեին այնքան ել հեշտ չէ: Փեթակի մուտքի առաջ կանգնած պահապանները նրանց ներս չեն թողնում:

Մի քանի ուրից հետո բոլոր փեթակներում համարյա մեկ հատ բոռ չմնաց: Այդ նշան է վոր ընտանիքները բարենաշող վիճակի մեջ են:

Այս մեծ աշխատանքից հետո մեղուները պատրաստություն են տեսնում ձմերելու: Բայց հետաքրքիր է, թե այդ ժամանակ մեղվապահն ինչ ունի անելու, ի՞նչով պիտի ոգնության գա նրանց: Չե՞ վոր գալ տարվա ամբողջ հաջողությունը կախված է բարենաշող ձմերելուց:

16. Ձմրան պատրաստություն

1, Ձմերող ընտանիքի մայրը պետք է լինի

յերիտասարդ: Յեթե մայրը պառավ է, պետք է փոխել: Պառավ մայրը չի կարող ձմեռը վողջ անցկացնել:

2. Թույլ ընտանիքը նույնպես չի դիմանա ձմռան ցրտին: Ուստի աշնանը թույլ ընտանիքները պետք է միացնել յերկու-յերկու և նրանց մեկի մայրը, վորն ավելի ծեր է—հեռացնել:

3. Ամեն մի ընտանիքին 14 կիլոգրամից պակաս մեղր չը թողնեք: Ավելի լավ է ավելորդ մեղր լինի փեթակում, քան թե թողնեք, վոր նրանք սովամահ լինեն: Մեղրով շրջանակները դարսեցեք կանոնավոր, վորպեսզի բոլոր մեղուներն ել կարողանան ոգավել, յեթե վոչ կարող է մեղր մընալ, բայց մեղուները սատկեն սովից:

4. Դադան—Բլատտի փեթակներում մեղուները ձմեռը նստում են կույտերով միջին 4—5 շրջանակների վրա, սկզբում տեղավորվում են արկանոցի մոտ շրջանակների ստորին մասերում, հետո մեղրը ուտելով՝ շարժվում են դեպի հետևի պատը: Այդ պատճառով պետք է աշխատել, վոր միջին շրջանակների վրա $1\frac{1}{2}$ քիլոգրամից պակաս մեղր չլինի: Ծայրի շրջանակների վրա պետք է ավելի շատ մեղր թողնել:

5. Ուժեղ ընտանիքների մեջ պետք է թողնել 10 շրջանակ, միջակներինը—8, իսկ նոր պարսին—7ը:

Կողքի շրջանակների և պատերի արանքում դնում են խոտե բարձեր, մի ալդալիսի բարձ ել կտրի ծածկի տակ, շրջանակների վերեկից: Մոմ-լաթն ել պետք է փոխել: Ձմեռը կարող է նրա վրա բորբոս առաջ գալ:

6. Մի քանի մեղվապահներ խորհուրդ են տալիս, վոր փեթակները տեղափոխենք առանձին ձմեռային շենքի մեջ. ուրիշները խորհուրդ են տալիս թողնել բացողյա, վորտեղ վոր ամառն են յեղել: Մեր յերկրում, վորտեղ առանձնապես խիստ ցրտեք չեն լինում ամենից լավն է բացողյա պահել:

17. Մեղվապահության կանոնները

Մեղուի կյանքի հետ աչաչափ ծանոթություն ունենալուց հետո, կարող ենք մեղվապահության համար հետևյալ համառոտ կանոնները մշակել:

1. Պետք է մեղու պահել միայն շրջանակավոր փեթակների մեջ և անպատճառ միևնույն սիստեմի:

2. Մեղվանոցում պետք է ունենալ միայն ուժեղ ընտանիքներ:

3. Հետևել, վոր մայրերը լինեն ջահել, չեք տարեկանից վոչ ծեր:

4. Պետք է հոգ տանել, վոր գլխավոր բերքի ժամանակ ընտանիքներն արդեն կանոնավոր

ուժի յեկած լինեն: Իսկ զբա համար հարկավոր
և նրանց գարնանը կերակրել:

5. Ձը թույլ տալ, վոր ընտանիքները պարս
տալով թուլանան. չեթե ուզումեք ընտանիքների
թիվը շատացնել ձեր մեղվանոցում, կարող եք
արհեստական ձևով պարս տալ:

6. Հետևեցեք, վոր փեթակի մեջ միշտ մեղրը
3¹/₂ կիլոգրամից պակաս չլինի: Յերբ մեղրը
պակաս է, մայրը լավ չի ձու ածում:

7. Հետևեցեք, վոր փեթակում միշտ ազատ
տեղ լինի թե մեղրի և թե ձվիկների համար:

8. Բոռերով լի մոմաթերթերը կարեցեք և
նրանց փոխարեն դրեք բանվոր—մեղուների մո-
մաթերթեր: Իհարկե, զիդեք, ինչու: Իսկ հին բո-
ռերի մոմաթերթերը կարող եք պահել մագա-
զիկների համար:

9. Չ'ուշացնեք մագազիկներ դնելը և վեր-
ցնելիս՝ անմիջապես նրանց միջից մեղրը քամե-
ցեք:

10. Մեղվանոցը և փեթակները մաքուր
պահեք:

11. Մեղուներին ձմրան պաշար կթողնեք
14 կիլոգրամից վոչ պակաս ամեն ընտանիքի
համար: Յեթե մեղրը քիչ է, պետք է աշնանը
մեղուներին կերակրել:

12. Չմեռը մեղուներին պաշտպանեցեք խո-
նավութլունից, ավելորդ տաքից և ողի պակա-
սութլունից:



23.104

801

1
2

ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊ.